

Մրցույթ՝ ՀՀ Երևան քաղաքի «Հայ-չինական բարեկամության դպրոց» հիմնադրամի մայրենի (14 դասաժամ առաջին հերթ), (28 դասաժամ երկրորդ հերթ), ռուսաց լեզվի (8 դասաժամ երկրորդ հերթ), անգլերենի (8 դասաժամ առաջին հերթ), (8 դասաժամ երկրորդ հերթ), մաթեմատիկայի (28 դասաժամ առաջին հերթ), (20 դասաժամ երկրորդ հերթ), ինֆորմատիկայի (6 դասաժամ առաջին հերթ), հայրենագիտության (4 դասաժամ առաջին հերթ), (4 դասաժամ երկրորդ հերթ), հայոց եկեղեցու պատմության (4 դասաժամ երկրորդ հերթ), կերպարվեստի (13 դասաժամ առաջին հերթ), (4 դասաժամ երկրորդ հերթ), ֆիզկուլտուրայի (12 դասաժամ երկրորդ հերթ), չինարենի (12 դասաժամ առաջին հերթ), (12 դասաժամ երկրորդ հերթ) և պատմության (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև գինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 5-ից մինչև սեպտեմբերի 16-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ն, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022 թ. սեպտեմբերի 20-ին՝ ժամը 13:00-ին**, «Հայ-չինական բարեկամության դպրոց» հիմնադրամում, հասցե՝ Զ. Սարկավազի 14: Տեղեկությունների համար զանգահարել +374 /10/ 284685 հեռախոսահամարով: